եւ յորժամ եղեւ փաթրիգն՝ արզուհալն այս էր թէ Զուլումքեար է, և ոչ խնդրեցին գանկատաւորք և կամ զայն խնդրող, թէ Ռայլին քիւրէկին իմտատ առնեմ։ Եւ թոյլ ետ ևս քէհեա վէզիրին և զգեցուցին կապա նմա և Սէմէրճի փուզէվէնկի մի որ Մուրատ կոչի՝ ի Պալատցոց, որ այլովք ի ծածուկս ընդ նմա կային ի խորհուրդ, որ էր Դեկտեմբեր Դ յաւուր Գշի երեկոյին պահու, հանեալ ծախս մինչ ի քսակս Լ՝ երկուց և երից արանց քէֆիլութեամբ Տիվրիկցոց։ Եւ գնաց առ Եղիազարն թէ Ես քո ծառայ և որդի եմ հնազանդ։

(ՌՃԺ = 1661)

Եւ յետ աւուրց բազում գործ անկաւ ի մէջ տեսանել պատրիկին և ոչ ետես և ոչ եղ ունկն նմա, վասն որոյ և նայ ի լուռ լեալ ոչ կարաց խօսել, հոգաց զիւր բանն, որ փաշայն Երուսաղէմի անիրաւութեամբ մինչ ի Ժ բիւր մի ըստակ առեալ էր ի վանիցն և սա էմր առ և հրաման ի վերայ որդոյ վէզիրի զի դատաստան և թէֆթիշ արասցէ, և ել գնաց Ցունվարի ԺԲ, և Մարտիրոսն եղև նուիրակ Անատոլոյ մինչ Ամիթ և գնաց Ցունվար ԻԴ։

Եւ զոր ինչ կայր մեղօք նշան՝ յետ արարեալ փաթրիկն արար կաշառովք, և զոր ճ զուռուշով և յաւելով տվեալ էին առաջնոյն, նա Ժ զուռուշով արար. եւ լցան ի վերայ նորա արք անհաւատք իբրեւ զինքն յորդորիչք չարաց եւ էառ ի միոջէ ճ ասլանլու և ետ թէմէսիք զի յետ Պէնտէկոստէին պսակեսցի։ Այլ և յետ աւուրց սկսան ընդ միմեանս յարձակիլ